



YERKIR

Union of NGO for Repatriation and Settlement
Union d'ONG pour le Rapatriement et la Réinsertion
Союз общественных организаций «Еркир» по репатриации и освоению
Հայրենադարձության եւ հիմնավորման կազմակերպությունների միություն

**Ջավախքահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհրդի
հայտարարությունը ջավախքահայ քաղաքական գործիչ Վահագն Չախալյանի նկատմամբ
բռնություն գործադրելու վերաբերյալ**

2010թ. մայիսի 9, Ախալքալաք-Երևան

2010թ. ապրիլի 30-ին Վահագն Չախալյանի նկատմամբ բռնություն է գործադրվել Վրաստանի Ռուսթավի քրեակատարողական հիմնարկի պահակախմբի կողմից: Ընտանիքի անդամների հետ ջավախքահայ քաղաքական գործչի տեսակցությունից հետո, երբ նրան ուղեկցում էին բանտախուց, պահախմբի աշխատակիցները հարձակվեցին նրա վրա՝ հարվածներ հասցնելով իրանին և դեմքին:

Սա երկրորդ անգամ է, երբ Վահագն Չախալյանը ծեծի է ենթարկվում վրացական բանտում: Առաջին դեպքը տեղի է ունեցել 2009թ. ապրիլի 16-ին՝ Թբիլիսիի Գլխանի քրեակատարողական հիմնարկում: Դրանից երկու օր առաջ՝ ապրիլի 14-ին Փարիզում Վրաստանի դեսպանատան առջև Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհուրդը ցույց էր անցկացրել ի պաշտպանություն Վահագն Չախալյանի:

Ստույգ տեղեկությունների վրա հիմնվելով՝ Ջավախքահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհուրդը հայտարարում է, որ այս միջադեպը ուղղակիորեն կապված է ս.թ. մայիսի 30-ի Վրաստանում կայանալիք ՏԻՄ ընտրությունների հետ:

Ջավախքահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհուրդը, խստորեն դատապարտելով տեղի ունեցածը, կոչ է անում միջազգային կազմակերպություններին համապատասխան գնահատական տալ վրացական իշխանությունների այս խայտառակ քայլին, որով նրանք հերթական անգամ ցինիկաբար ոտնահարում է կտտանքների և եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելման ուղղությամբ իր ստանձնած բոլոր միջազգային պարտավորությունները:

Ջավախքահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհուրդը վերահաստատում է Վահագն Չախալյանի ազատագրման համար պայքարելու իր վճռականությունը: